

ՏԻՐԱՆ ԼՈՔՄԱԳՑՈՋՑԱՆ

ԿՈՄԻՏԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՒՐՔԵՐԵՆՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Կոմիտասի ձեռագրերի մեջ կան մեծ թվով թուրքերեն երգեր՝ գրառված Կոմիտասի կողմից: Այս երգերից 4-ը տարբերվում են մյուսներից: Դրանք բազմաձայն են և պչքի են ընկնում կառուցվածքային ու մեղեդիական ոճի առանձնահատկություններով, ինչը ակնհայտորեն առանձնացնում է այս երգերը մյուս բազմաքանակ "շարքից"¹ և "թյուրքի"ներից², որոնք Կոմիտասը գրի է առել ու հավաքել: 4 երգերից 3-ը գրված են երգչախմբի համար, իսկ չորրորդը մի մեներգ է՝ դաշնամուրի ընկերակցությամբ: Այս 4 երգերը հորինել է հենց ինքը Կոմիտասը, և այս հոդվածը նվիրված է միայն այս 4 երգերին:

Խմբերգերից մեկը, "Սելամիքդեմ չըքտըլար", գտնվում է Կոմիտասի ֆոնդի 443 և 445 համարների տակ: Երգը գրի է առնված բազմաթիվ կրկնություններով, բոլորն էլ սևագրեր են, մասամբ թերի վիճակում, կարելի է ընդունել, որ Կոմիտասը այն հետազայում մաքրագրել է: Այդ մասին վկայում են էջերի վրա դրված մեծ «✓» նշանները: Կ.Ֆ. 443 համարի վավերագիրը մի մոտայի տեսք է: Էջերը տասը տողանի են: Երգը արձանագրված է տետրի միայն երկու էջերի վրա: Գրված է հինգ տողի վրա, վեց ձայնի համար՝ S/A, T₁, T₂, B₁ և B₂: Թեև մի շարք հատվածներում սոլի բանալիի կողքը դրված է ֆա կիսվեր [dies] նշանը, որը պատկանում է "սոլ մեծալար" [Sol Major] կամ "մի փոքրալար" [Mi Minor] ձայնակայքին [tonality], իշխող ձայնակայքը "դո մեծալար" է, ամանակը [metre]՝ 4/4:

Երգը ամբողջական է: Վերջում ավելացված են 6-րդ և 7-րդ տների երկու տարբերակներ: Գրված է մատիտով: Ելնելով Կոմիտասի աշխատանքից, այստեղ ներկայացված քիչ ուղղումներով նյութը կարելի է ընդունել որպես վերջնական տարբերակ, որը ամենայն հավանականությամբ այս ձևի տակ էլ մաքրագրվել է՝ թերևս ամենայն փոփոխություններով: Այս երգի բազմաթիվ արձանագրությունները գտնում ենք Կ. Ֆ. 445 համարի տակ, որը բաղկացած է տարբեր չափերի հատուկ մոտագրության համար պատրաստված առանձին թերթիկներից:

Երգի տարբերակները գրված են 3, 4 և 5 տողերի վրա, իսկ մի դեպքում ավելացված է նաև դաշնամուրի ընկերակցությունը: Համարյա բոլոր գրառումներն էլ սևագիր վիճակում են, երգը հազվադեպ է արձանագրված ամբողջովին և միայն մի դեպքում է վերջնական մաքրագրվածի տպավորություն թողնում: Այն նվիրված է Օսմանյան պետության երկրորդ

¹ Երբքը կոչվում են այն երաժշտական ստեղծագործությունները, որոնք հորինված են մասնագետ երաժիշտների կողմից:

² Թյուրքյունները ժողովրդական անանում ստեղծագործություններ են:

սահմանադրությանը ու մասնավորապես "Ծարժման Բանակ"ի³։ Երգի բանաստեղծությունը շարադրված է ժամանակակից թուրքերենով, որը եղել է Օսմանյան Թուրքիո խոսակցական լեզուն։

Երկրորդ խմբերը, "Լ՜յ մուազզամ", նույնպես գտնվում է Կոմիտասի ֆոնդի 443 և 445 համարների տակ։ Ինչպես որ վերը տեսանք, "Սելանիքդեն չըքտլլար" երգի գրառումները Կ. Ֆ. 445 համարում ավելի շատ են, քան Կ. Ֆ. 443 համարում։ "Լ՜յ մուազզամ" երգի դեպքում ուղիղ հակառակ պատկերն է նկատվում։ Կ. Ֆ. 445 համարում կատարված գրառումներում այս երգը գրված է 5 տողերի վրա, S, A, T₁, T₂ և B (B₁-B₂) ձևով, ընդամենը 3 էջ։ Ընդհանուր առմամբ ձայները թերի են արձանագրված, իսկ մի դեպքում էլ S/A-ը ցույց է տրված 3-րդ տողում։ Կ. Ֆ. 443 համարում կան երգի բազմաթիվ տարբերակներ՝ հեղեղված սրբագրություններով։

Այս գրառումներից միայն մեկն է ամբողջովին և մաքուր արձանագրված, բոլոր ձայները և երաժշտական նշանները անթերի են և, ինչը խիստ հազվադեպ է հանդիպում Կոմիտասի մոտ, գրված են առանց որևէ ուղղումների։ Այս տարբերակում երգը սկզբից գրված է 4 տողի վրա T₁, T₂, B₁ և B₂, հետո անցել է 5 տողի՝ S, A, T₁, T₂ և B։ Գրառումներում սույն բանալիի մոտ ոչ մի նշան չի դրված, ինչը նշանակում է "դո մեծալար" ձայնակայք։ Միայն երկու դեպքում գրառման սկզբում դրված է չորս կիսվեր նշաններ, որը նշանակում է "մի մեծալար"։

Վերջնական տեսք ունեցող տարբերակի մեջ էլ, ըստ երևույթին, ճիշտ նշաններն են դրված, որոնք երեք կիսվեր նշաններն են սույն բանալիի մոտ, որը "լա մեծալար" ձայնակայք է նշանակում։ Այդ ձայնակայքով էլ ընթանում է այս ստեղծագործությունը։ Երգը սկսում է 4/4 ամանակով, այնուհետև դառնում 3/4, այսպես չորս անգամ փոխարինվելուց հետո՝ վերջանում է դարձյալ 4/4-ով։ Երգը նվիրված է Օսմանյան կայսրության մեհապետ փատիշահին։ Երգի բանաստեղծությունը շարադրված է օսմաներենով (հին թուրքերեն)⁴։ Փատիշահի անունը չի նշվում ուղեղավորի մեջ, սակայն Կոմիտասի՝ Պոլսում գտնվելու ժամանակաշրջանում Աթոլու Համիդ II-ը արդեն զահից հեռացվել էր ու փոխարենը Մեհմետ V Ռեշատն էր սուլթան նշանակվել երիտթուրքերի կողմից (27-4-1909)։ Նրա զահակությունը տևեց մինչև իր մահը (4-7-1918)։ Բացի այդ, փառաբանության մեջ ասվում է "նեվճահ", որը նշանակում է "մոր զահակալ"։ Սուլթան Մեհմետ V Ռեշատը այս երգի ստեղծման ժամանակ իր զահակալման երեք տարին դեռ չէր բոլորել։ Այստեղից հետևում է, որ երգը կարող էր ձոնված լինել միայն սուլթան Մեհմետ V Ռեշատին։

Առաջին հիշատակությունը "թուրքական երգեր"ի մասին հանդիպում ենք Կ.Պոլսում հրատարակվող "Ազատամարտ" թերթի երրորդ էջում։ "Մամր լուրեր" բաժնում թերթը հաղորդում է Կոմիտասի մասնակցության մասին իր երգչախմբով Տրիպոլսի վերավոր զինվորների օգտին կազմակերպվող միակամանդանին։ «Կոմիտաս վարդապետը ուրախությո-

³ Օսմանյան պետության պատմության ընթացքում երկու անգամ է սահմանադրություն հռչակվել։ Առաջինը 23 դեկտեմբեր 1876 թվականին, իսկ երկրորդը՝ 23 հուլիս 1908-ին։ 31 մարտ 1909-ին "Ծարիաթ"ի կողմնակիցները կազմակերպեցին մի հեղաշրջում, որը ճնշվեց Սելանիկից (Թեսալոնիկե) եկած "Ծարժման Բանակ"ի կողմից։

⁴ Օսմանյան Թուրքիայի վերնախալի լեզուն, որը մի խառնուրդ էր արաբերենի ու պարսկերենի (գերակշիռ մասը), լեզվի մեջ 15-20% բառեր ունեին թուրքական ծագում։

դա մույնպես մի գովերգ է: Այն ուղղված է փատիշահին "հայկական դպրոց"ի կողմից և ոչ մի դեպքում չի կարող դասվել "ազատության երգեր"ի շարքում: Հայտնի չէ, թե ո՞ր դպրոցի համար է հորինել Կոմիտասը այդ երգը և ի՞նչ առիթով: Գրված է 30 տողանի մեծ մուտային թղթերի վրա, բաղկացած է երկու էջից: Մի մասը գրված է 4, իսկ մնացածը 2 տողի վրա 4 ձայնի համար՝ S, T₁, T₂, B և S/A, T/B: Առաջին և երկրորդ տների բառերի միջև եղած վանկերի տարբերության պատճառով մույն եղանակը փոքր-ինչ տարբերություններով երկու անգամ է արձանագրված (խոսքը վերաբերում է 4 տողի վրա գրվածներին): Ամբողջ ստեղծագործությունը ընթանում է "դո մեծալար" ձայնակայքի մեջ: Առաջին տունը սկսվում է 9/4 ու շարունակվում 25/8 ամանակով, իսկ երկրորդ տունը ընթանում է 9/4 ու հետո 11/8 ամանակով: Երկուսական տողի վրա գրվածները երգի տարբերակներ են և առանց բառերի:

Այս երգերի հետ կապված մի "ակամատեսի վկայություն" գոյություն ունի: Կոմիտասի ֆոնդի 74 համարի տակ գտնվում են հուշեր Կոմիտասի մասին: Հուշերը գրի է առել Ստեփան Միքայելյանը "Գուսան" երգչախմբի անդամ բարիտոն Արամ Աստվածատրյանից, Երևանում, 1950 թվականի հունվար ամսվա մեջ: Աստվածատրյանն ի միջի այլոց տալիս է մահ շահեկան տեղեկություններ՝ կապված 1912 թվականի ապրիլի 8-ի համերգի ու վերոհիշյալ թուրքական երգերի իմաստի մասին: Միայն 1912-ի փոխարեն մա մշում է 1913 թվականը: Ամենևին էլ զարմանալի չէ, եթե ի մկատի առնենք, որ հիշված իրադարձություններից անցել էին շուրջ 40 երկար տարիներ: Ահա թե ինչ է գրում Արամ Աստվածատրյանը. «1913 թվին պոլիսում, Մեծիտ խալիֆան, Կոմիտասի մասին գնահատելի տեղեկություններ էր ստացել՝ որպես տաղամղավոր գեղարվեստագետ և դրա համար շատ էր սիրում:

Մի քանի անգամներ անձամբ խալիֆան, Կոմիտասից խնդրել է թուրքական երգչախումբին ղեկավարման պաշտոն ստանձնելու: Սակայն Կոմիտասը մի շարք հարգելի և օրինավոր պատճառներով մերժում է: Այս մերժումի վրա խալիֆան Կոմիտասից խնդրում է գոնե մի օր Գուսան երգչախումբի համերգին ներկա գտնվել: Խալիֆային խնդրամբը ընդունվում է Կոմիտասից:

Կոմիտաս՝ ըստ իր ցուցակին, ավելացնում է մահ երկու հատ թուրքական եղանակներ, դաշնավորելով երգչախումբին սովորեցնում է:

Գալիս է խալիֆայի և Կոմիտասի ժամադրության պանծալի օրը: Գուսան երգչախումբը, կազմ ու պատրաստ սպասում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ բազմությունը հավաքվել էր արդեն. բայց խալիֆան դեռ չէր եկել:

Համերգը պիտի սկսեր հայկական մոր ժամադրությամբ կեսօրվա ճիշտ ժամը երկուսին: Կոմիտասը սույն ժամադրությունից տասը րոպե պակաս հասնում է երգչախումբի զլխին: Լինում է ժամը երկուսը, դեռ խալիֆան չէր երևում. համերգը պետք է սկսվեր թուրքական երգով: Կոմիտաս՝ հրամայում է բանալ վարագույրը. սակայն երգչախումբից բացառվում են խալիֆան դեռ չէ՝ եկած... -թող՝ մի սուրճ պակաս խմի: Նորից հրամայում է և վարագույրը արդեն բացվում է. Կոմիտաս՝ հանդիսականներին դառնալով ողջունում է և բոլորն ծափահարությունից հետո սկսում է երգչախումբը երգել թուրքական առաջին երգը:

Էյ Մու...

Երգի վերջավորության հասնում է խալիֆան իր մի քանի հետևորդների հետ. երգը վերջանում է. Կոմիտասն էլ դառնում ժողովրդին ողջունելու... Կոմիտասի և խալիֆայի աչքերը իրար զուգընթաց զայրվ, խալիֆան ուղղակի խոնարհական՝ ողջունում է Կոմիտասին: Հանդիսականների հոծ բազմությունը բոտն կերպով ծափահարում են և երեք անգամ ուռտա բացագանջություններով թնդացնում են ամբողջ սրահը. երգչախումբը խնդրում է Կոմիտասից մորից կրկնելու առաջին երգը. -երկրորդը: Ասում է Կոմիտաս և սկսում են:

Սեղանիկոնեմ...

Հետո Գուսան երգչախումբը սկսում է մի շատ [շարք - Տ.Լ.] հայկական ժողովրդական երգեր. և վերջացնում են "Սիփանա քաջեր" ու: Ինչպես ասում է Գուսան երգչախումբի պարիթոն՝ ընկ. Արամ Աստվածատուրյան՝ ամբողջ սրահը "Սիփանա քաջերի" երգով և բոտն ծափահարություններով կարծես հիմնահատակ թնդացնում էր:

Խալիֆան դուրս ելած պահում դրսում՝ Կոմիտասին հանդիպելով՝ հրճվանքից, մույմիսկ ձեռքը համբուրելու աստիճան խոնարհական ողջունում է իր սիրելի Արվեստագետին:

Կոմիտասի հետ կապված այս բացառիկ արժեքավոր դրվագը պարունակում է մասնաճշտություններ: Համերգը կայացել էր ոչ թե 1913-ին, այլ 1912-ին, ինչպես արդեն ասվեց: Հագիվ թե իշխան Մեջիդը առաջին անգամ պիտի ունկնդրեր Կոմիտասին, քանզի մածանորացել էր մրա արվեստին դեռևս 1911-ին: Վերջապես՝ իշխանը դժվար թե խնդրանքով դիմեր Կոմիտասին համերգին մերկա գտնվելու համար: Մյուս կողմից հուշերը պարունակում են հետաքրքրական տեղեկություններ, որոնց չենք հանդիպում ոչ մի ուրիշ տեղ: Այն վկայում է մասն Կոմիտասի սկզբունքայնության և իշխանի խոնարհության մասին:

"Դեպքը", որի մկարագրումը հասել է մեզ Արամ Աստվածատուրյանի միջոցով, ավարտվում է հետևյալ ձևով.

«Կոմիտաս ի պատիվ Գուսան երգչախումբի՝ որոշ ժամանակ հետո հավաքույթ է կազմակերպում "պէլխոզ" [Բեքոզ - Տ.Լ.] զբոսավայրը:

Վոսֆորում [Բոսֆոր - Տ.Լ.] սպասարկող մարդատար շոգենավով գնում են "պէլխոզ" զբոսավայրը. մինչև իրիկուն ուրախ զբոսնելուց հետո, իրիկվա դեմին վերադառնում են...:

Շոգենավը պանում էր ծովի վրայով. կապույտ ալիքները մեկդի հրելով. խալիֆայի սերայը ծովի եզերքումն էր և շոգենավը "սէրայ"ին մոտից էր անցնում. Կոմիտաս կանգնեցնում է շոգենավը և երգչախումբին դառնալով ասում է -հիմա կրկնեցեք այդ առաջին թյուրքական երգը. և երգչախումբը սկսում է երգել (էլ Մուազզամ և այլն.) խալիֆայի "սէրայ"ի փակ պատումները բոլորն էլ առանց խտրության բացվում են և ունկնդրում են երկնային երգեցողությունը»¹⁰:

Կոմիտասի Մ. Բաբայանին ուղղված մամակից երևում է այս խմբերգերը գրելու մպատակը՝ "որպեսզի գործերնին հաջողի": Դժվար ժամանակներ էին, ամբողջ աշխարհի գլխավերևում կախված էր պատերազմի վտանգը, Հայկական հարցը օրակարգի վրա էր

¹⁰ Ընդօրինակված է բնագրին հավատարիմ մնալով, առանց որևէ ուղղումների: Տպագրվում է առաջին անգամ (մասնակի):

դրված, ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրի ներսում: Սկզբնական շրջանի ոգևորությունը "թուրք և հայ ժողովուրդների եղբայրության" առիթով սկսել էր հետզհետե մարել: Փողոցներում հայի և թուրքի գրկախառնությունից ու արցունքախառն "մեք այլևս եղբայր ենք" կոչերից հետո հուսախաբություն էր առաջացել հայկական շրջանակներում:

Հակադարձ ամվստահություն էր տիրում երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ: Նման պարագաների ներքո անհավանական չէ, որ իշխանությանը երգի միջոցով գովաբանելու մտահղացումը պոլսահայ համայնքին պատկաներ, որպես տուրք պետությանը, որպես հավատարմության հավաստիք, որպես հայ-թուրք բարեկամությանը ներդրված լումա: Նույնը կարելի է ասել "Տրիպոլիսի հիվանդ գիմկորների օգտին համերգ"ի մասին, որը իրեն "առաջարկվել էր" և նա չէր կարող մերժել:

Հարկ է նշել, որ Օսմանյան և հետագայում էլ թուրքական պետության պետական վերահսկման (մասնավորապես միապետին), ռազմական ուժերին, սահմանադրությանը, խալիֆային և պետությանը ուղղված փառաբանություններ, գովաբանություններ, ձոներգեր և քայլերգ հորինվել են հայ երաժիշտների կողմից Կոմիտասից առաջ էլ: Այս առիթով կարելի է հիշատակել առաջին երթին Հեքիմյանի, Սանթուրչյանի, Սինանյանի, Հյուրմյուզյանի, Մերեջյանի և Հանեսյանի անունները: Նույն շարքի մեջ է նաև Չուխաջյանի անունը, որի մի ստեղծագործության¹¹ բառերը, ուր նույնպես փառաբանվում է փառաշահի մի հայկական դպրոցի կողմից, այնքան մեծ են Կ. Ֆ. 444 համարի տակ գտնվող երգի բառերին, կարծես նրա մի տարբերակը լինեն:

Կոմիտասի գրչին պատկանող չորրորդ թուրքերեն երգը ամփոփված է Կոմիտասյան ֆոնդի 522 և 523 համարների տակ: Սա մի մեներգ է դաշնամուրի ընկերակցությամբ: 523 ֆոնդային համարով նյութը բնագիր է: Գրված է թանաքով, մաքուր, ինչը վկայում է մաքրագրված մի տարբերակի մասին: Այնուամենայնիվ, Կոմիտասը, սովորության համաձայն, այս մաքրագրված տարբերակի վրա էլ կատարել է բազմաթիվ նշումներ: Այսպիսով, մայր եղանակը սկզբից մինչև վերջ նորից է գրառվում մատիտով, արդեն երկու ձայն իջեցրած ձևով ու փոփոխություններով: Չբավարարվելով նշված ուղղումներով, Կոմիտասը երգի համարյա 1/3 մասը ենթարկում է նոր ուղղումների, դարձյալ մատիտով, բայց այս անգամ Համբարձումյան ձայնանիշերով: Ամսական 5/8 է: Երգի բառերը չեն արձանագրված:

Գրված է "մի փոքրալար" [Mi Minor] ձայնակայքի մեջ, Գերմանական, Breitkopf & Härtel ֆիրմայի մոտագրության հատուկ թղթերի վրա: Ընդամենը 5 էջ: Առաջին էջի վերևի ձախ անկյունում գրված է ընթացքը [tempo], արաբատառ (օսմաներեն - հին թուրքերեն)¹²: Կ. Ֆ. 522 համարում գտնում ենք նույն երգը, գրված ուրիշի ձեռքով: Այստեղ ձայնակայքը իջեցրած է մեկ ձայնով՝ "հե փոքրալար": Գրված է մոտագրության հատուկ թղթերի վրա, այս դեպքում Գերմանական J. F. & Co. ֆիրմայի: Բաղկացած է 5 էջից:

Ամհայտ ընդօրինակողը որքան էլ մեծ բժախնդրություն ցուցաբերած չլինի ձայնանիշերը կարելի եղածին չափ գեղեցիկ գրելու մեջ, կատարած բազմաթիվ պարզագույն սխալները մատնում են իր երաժշտության մեջ անհրազել լինելը: Ունենալով այս երգի Կո-

¹¹ Գ.Ա.Թ., Չուխաջյանի Ֆոնդ, նո. 98:

¹² Օսմանյան պետության մեջ օգտագործվում էր արաբերեն այբուբենը՝ հարմարեցված թուրքական հնչյունաբանությանը:

միտասայան բնագիր տարբերակը, կարելի է 522 համարի տակ գտնվող մյուսի երաժշտական մասը ընդհանրապես ի մկատի չառնել: Սակայն այս մյուսը պարունակում է ուրիշ, ակնհայտ կարևոր տեղեկություններ: Զայնամիշերի տակ տեղադրված են երգի բառերը, որոնք պակասում են 523 համարի տակ եղող մյուսի մեջ, բացի այդ, արձանագրված են երաժշտությունը հորինողի և բանաստեղծի անունները, առաջին էջի վերևի աջ ու ձախ անկյուններում: Առանց 522 համար վավերագրի երբեք չէր պարզվի, թե 523 համարի տակ գտնվող երգը ի՞նչ է իրենից ներկայացնում:

Բանաստեղծությունը գրված է արաբատառ (օսմաներեն - հին թուրքերեն): Բարեբախտաբար հաջողվեց ձեռք բերել այդ բանաստեղծության թուրքերենի վերածված ամբողջական տարբերակը: Բանաստեղծության վերնագիրն է "Է՛յ իյնեմ, տիք" (Ո՛վ ասեղս, կարի՛ր): Հեղինակը, անվանի թուրք բանաստեղծ, քաղաքական գործիչ և "թուրքականության" գաղափարի պարագլուխներից Մեհմեդ Էմինն է¹³: Ի՞նչ կապ կարող էր լինել թուրքական գաղափարախոսության առաջատարներից մեկի և Կոմիտասի միջև: Այս հարցի պատասխանը սպառնիչ կերպով տալիս է Սիրունին, երբ գրում է, թե "Ան թյուրք օջաղըն - Տ.Լ.] հույս դրած էր Կոմիտասին վրա ա՛լ՝ թուրք հարագատ երաժշտություն մը ստեղծելու իր ճիգերում մեջ"¹⁴:

Ընդհատ այդ պատճառով էլ թուրք ազգային գործիչներ ու անվանի արվեստագետներ ելք ու մուտք էին անում Կոմիտասի բնակարանը, իրեն հրավիրում ինչպես ելույթ ունենալու համար, այնպես էլ իրենց տան մտերմական հավաքույթներին: Զինվորական վարժարանում կայանալիք համերգի "հրավերը Կոմիտասը ընդունած էր": 1912-ն էր: Եղած տվյալների համաձայն Կոմիտասի հանդեպ եղած հետաքրքրությունը թուրք շրջանակներում այդ թվականից է սկսվում: Ըստ Հալիտե Էտիպի¹⁵, այդ տարիներին Կոմիտասի «անձնավորությամբ էին հետաքրքրվում ու զինքը լսելու գալիս» Յուսուֆ Աքչուբան¹⁶, որը «մղված իր երաժշտասիրութենեմ, բայց կհայտարարեր թե Կոմիտաս մեծ վնաս պատճառած է թուրքին, գողնալով անոր մշակույթը երաժշտության և երգերու ձևով»¹⁷:

Բանաստեղծներ Յահյա Քեմալը¹⁸ և Մեհմեդ Էմինը մույնպես «կհետաքրքրվեին իր անձնավորությամբ և կու գային լսելու զինքը»¹⁹: Վերջինս, ինչպես վերը նշվեց, թուրք-թուրքական գաղափարախոսության կրակոտ ջատագովներից էր և այդ նպատակով ծայրաստիճան ազգայնամոլ բանաստեղծություններ էր գրում: Ըստ երևույթին որոշել էր մաս անձնապես օգտվել Կոմիտասի տաղանդից ու առաջարկել էր եղանակավորել իր մի բանաստեղծությունը, գրված 2 սեպտեմբեր 1913 թվականին²⁰:

¹³ Բանաստեղծ և քաղաքական գործիչ Մեհմեդ Էմինը հետագայում ընդունել է Յուրտաքուլ (ազգի ծառա) ազգանունը:

¹⁴ "Կոմիտասին հետ", Հ. Ժ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 45:

¹⁵ Առաջին կին թուրք գրող:

¹⁶ Թուրք ազգայնամոլների պարագլուխներից, "Թուրք օջաղը"ի հիմնադիրներից:

¹⁷ "Կոմիտասին հետ", Հ. Ժ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:

¹⁸ Բանաստեղծ Յահյա Քեմալը հետագայում ընդունել է Բեյաթըլ ազգանունը:

¹⁹ "Կոմիտասին հետ", Հ. Ժ. Սիրունի, «Էջմիածին», 1968, Գ, էջ 48:

²⁰ "Mehmet Emin Yurdakul'un eserleri-I", Istanbul, 1989:

Չկարողանալով մերժել այդ առաջարկը, Կոմիտասը սակայն օգտվել է ձայնավորման մասը ընտրելու իր իրավունքից: Զարմանք է առաջացնում, թե ինչպե՞ս էր վարդապետը 24 տներից բաղկացած արմատիկ բանաստեղծությունների ընտրել այն տները, որոնք առանձին վերցրած միանգամայն ուրիշ տպավորություն են թողնում: Սովորաբար գրվում է մի եղանակ, որը կրկնվում է այնքան, որքան տներ կան երգում: Կոմիտասի հորինածը կրկնվող մի եղանակ չէ, այլ երկու տների վրա տարածվող մի երաժշտական կտավ: Բառերը գրված են հնգագծի տակ, վերջում, սակայն, հնգագծերի վերևում ավելացված է երկու տող: Դա ողջ բանաստեղծության եզրափակիչ տողերն են, ուր խտացված է թուրաճական գաղափարախոսության հիմնական միտքը:

Մեզ թվում է, թե նրանք ավելացված են այդ տողերից զմայլված հեղինակի (Մ. Էմինի) կողմից: Բանաստեղծությունը տպագրվել էր "Թյուրք յուրտու" (թուրքի հայրենիք) ամսագրում և "Թաճ սեպերի" (այգաձայներ) կոչվող Մեհմեդ Էմինի բանաստեղծությունների զրբույկում, որի երկրորդ տպագրությունը կատարվել էր արդեն Կոմիտասի հորինած երգի մոտաներով: Այս փաստը կարելի է համարել որպես Կոմիտասի ստեղծագործություններից մեկի առաջին տպագրությունը Թուրքիայում, ինչը ցայտմի հայտնի չի եղել Կոմիտասագիտությանը²¹:

Հատկանշական է, որ "Թյուրք օջաղը" ²² իր դեկավարների՝ Համտուլլահ Սուսիհի²³, Հալիտե Էսիփի, Մեհմեդ Էմինի և մյուսների միջոցով հրավիրում էր Կոմիտասին բանաստեղծությունների ու համերգների, մեծարում էր իրեն և գովասանքներ շնայում հայ ժողովրդի հասցեին²⁴: 1914-ին Կոմիտասին հրավիրել էին մոր կազմավորվող թուրքական երաժշտանոցում դասավանդելու: Չոպանյանին հասցեագրված իր մամուլում Կոմիտասը նշում է. «...տաճիկ երաժշտարանը բացուելու է, և կա՛յ մոյակես երաժշտական բաժին: Ը՛է-միլ փաշան է հարցրել ինձ՝ բացակայութեանս և խնդրել է զալս իրեն յայտնեն. թուի, թե ինձ ևս պաշտօն են առաջարկելու...»²⁵:

Երվանդ Հակոբյանին ուղղված մի ուրիշ մամուլում Կոմիտասը խոսում է արդեն ստանձնած դասերի մասին: «Բաղաբապետութիւնը հիմը դնելու վերայ է երաժշտարանի մը, որի պաշտօնեաներէն մէկն այլ զիս կարգեցին. չը մերժեցի, բայց միայն մերդաշնակութեան դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ»²⁶: Նամակից երևում է, որ Կոմիտասի պարտականությունները շատ ավելի մեծ պիտի լինեին ստեղծվող երաժշտանոցում, սակայն նա հրաժարվում է պաշտոնավարությունից՝ ստանձնելով միայն մի դաս:

Ի՞նչն էր պատճառը, որ ազգային և կուսակցական գործունեությունից զերծ մնացող երաժիշտ-հոգևորականը, որի անհրաժեշտությունը զգացվում էր թուրքական երաժշտանոցը կազմավորելու գործում, այնուամենայնիվ չխուսափեց աքսորից: Արդյո՞ք դա Աքչու-

²¹ "Mehmet Emin Yurdakul'un eserleri-I", Istanbul, 1989:

²² "Թյուրք օջաղը" կոչվող թուրքական ազգայնամոլների կազմակերպությունը հիմնվել է 25-3-1912 թվականին:

²³ Բանաստեղծ Համտուլլահ Սուսիհին հետագայում ընդունել է Թամըրլյուկեր (Աստված փառաբանող) ազգանունը:

²⁴ "Կոմիտասին հետ", Հ. Մ. Սիրունի, «Էշմիածին», 1968, Գ, էջ 46:

²⁵ "Նամակներ", Գ.Ա.Թ., Երևան, 2000, էջ 158, մո.31:

²⁶ "Նամակներ", Գ.Ա.Թ., Երևան, 2000, էջ 118-119, մո.1:

